

## ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, ԳՊՀ դասախոս

### ԿԱՊԵԼԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՍԱՆ ՄԻՋՈՅ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ ԵՎ ՊԱՏԺԱՏԵՍԱԿ՝ ԶՐԱԴԱՇԱԿԱՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՈՒՄ

Ուսումնասիրությունից պարզվում է, որ հանցագործներին պարաներով, երկարյա շղթաներով կապելը գրադաշտական և վաղրիստոնեական իրավունքում եղել է քրեադատավարական խափանման միջոց, քննության մերող (անձին զղման ու խոստվանության հակելու միջոց) և պատժատեակ, կրել է ծիսական-արարողակարգային բնույթ: Ընդ որում, կապելը ոչ միայն որպես պատիճ, այլ նաև որպես խափանման միջոց ու քննության մերող նույնապես ծառայել է հանցագործությունների կանխման նպատակներին: Կապելու ձևերը եղել են տարբեր: Ամբարշտություն, աղանդավորություն և զանազան այլ ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, որոնք իրաժարվել են զղաղուց, մեղքերը խոստվանելուց, ներում ու փրկություն հայցելուց, որպես պատժատեակ և կատարածի համար որպես հատուցում կիրառվել են կապելու հատուկ, առավել խիստ ու դաժան ձևեր: Դրանք կրել են «չարաչար», «փխստ», «կարևոր», «քրուն» և այլ անվանումներ: Նման դեպքերում հանցագործ կապելը է պարանցից, ուղքերից ու ճենքերից, նրա մարմնին տրվել է դիմական տեսք, որից հետո նա նետվել է Խոր Վիրապ (ինչպես Գրիգոր Լուսավորիչը) կամ շղբայակապ բանտարկվել (ինչպես Արշակ Երկրորդ հայոց թագավորը), կամ մահապատճել այլ միջոցներով (ինչպես սուրբ Կույսեր Հռիփսիմեն, Գայանեն և այլք): Հիմնավորվում է նաև, որ հանցագործներին զանազան խորհրդանշական-ծիսական ձևերով կապելուն վերաբերող զրադաշտական նորմեր, պատժատեակմեր և այլն, Գրիգոր Լուսավորիչ կողմից ներմուծվել են հայկական վաղրիստոնեական իրավական համակարգ և լեզվիմացվել:

*Հիմնարարեր-Տրդառ Երրորդ Սեծ, Գրիգոր Լուսավորիչ, կապել, գրադաշտական Հայաստան, բրիստոնեական Հայաստան, Խոր Վիրապ, դժոխ:*

Հին իրանական և հայկական իրավունքի ճանաչման պատմական կամ իրավահայտ աղբյուրների մեջ կարելի է հանդիպել կասկածյալին, մեղադրյալին կամ դատապարտյալին տարբեր ձևերով կապելու, և նրանց այդ վիճակում զանազան մարմնական տանջանքներ պատճառելու նկարագրություններ: Այդ փաստերն ուսումնասիրելիս անմիջապես էլ ակնհայտ է դառնում, որ հանցագործներին կապելը չի եղել սուկ խափանման միջոց: Այն ունեցել է ծիսական-արարողակարգային նշանակություն և բնույթ, եղել զրադաշտական նախաքննական, դատաքննական-դատավարական հնարանք, դրա ընթացակարգն ապահովող հարցանության եղանակ ու մերող, քննության ընթացակարգն ապահովող միջոց, ինչպես նաև պատժատեակ: Այն իրավարակորեն և հանդիսավորար կիրավել է առանձնապես վտանգավոր արարքներ կատարած անձանց՝ աստվածների նկատմամբ «անշնորհակալ» գտնվողների, ամբարիշտների, աղանդավորների, ամբարտավանների և այլն նկատմամբ: Ընդ որում, իրականության մեջ կապելու (կապկապելու) զրադաշտական-մոգական ծեսը կատարվել է ըստ որոշակի կանոնների ու ընթացակարգերի, առավել չափով նմանեցվելով կապելու այն ձևերին, որոնք, ըստ իրանական իրավա-

հայտ աղբյուրների, դեռի կողմից կիրառվել են դժոխքում հանգրվանած մեղավոր հոգիների նկատմամբ:

Որպես աստվածային դատարանում վարույթն ապահովող միջոց և պատժատեակ հատուկ ձևով կապելը հիշատակվում է Ավեստայի «Զրադաշտի փորձությունը» ֆրակարդի 29-րդ ստանում: Համաձայն դրա չարագործ մարդու մահվանից երեք օր հետո թշում-գալիս է մահվան դև Վիզարշը, բռնում մահացածի մարմնի գլխավերելում տատանվող նրա մեղավոր հոգուն, կապում և քարշ է տալիս Զինվատ կամրջի մոտ գտնվող աստվածային դատարան<sup>2</sup>: Իրանական իրավունքի ճանաչման մյուս աղբյուրի՝ «Դատաստան-ի Սենոգ-ի խրատի» առաջին հարցում (գլխում) Վիզարշ դևի կողմից մեղավորի հոգուն կապկապելը և աստվածային դատարան քարշ տալը նկարագրվում է ավելի գունագեղ կերպով: Ըստ դրա դև Վիզարշը «...մեղավոր հոգուն կապում է ամենասարսափելի եղանակներով, և ...տանում Զինվատ կամրջի մոտ: Եվ այնժամ արդարակյաց Ռաշնը մեղադրում է այդ հոգուն մեղավորության մեջ: Դրանից (դատավճռի կայացումից) հետո դև Վիզարշը բռնում է մեղավորի հոգուն, անխճարար, դաժանորեն ծեծում և տանջում նրան: Իսկ մեղավորի հոգին բարձրածայն լացում և

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հեկեկում է, ուժեղ աղաջում և խնդրում...: Դրանից հետո դև Վիզարջը կատաղությամբ նրան քարշ է տալիս ամենաներքին դժոխքը: Եվ այնժամ աղջիկը, որը նման չէ ոչ մի ուրիշ աղջկա, ուրու է գալիս նրան դիմավորելու: Եվ հարցնում է հոգին այդ չարագորույն աղջկան. «Ո՞վ ես դու՛: Ես երբեք աշխարհում չեմ տեսել ավելի վաս և սարսափելի տեսք ունեցող աղջկա, որպիսին դու ես»: Ի պատասխան աղջիկն ասում է. «Ես աղջիկ չեմ, այլ քո գործերը, ո՞վ դու դժնի՝ չար մտքերով, չար խոսքերով, չար գործերով և չար հավատով...»:

Այսպիսով, ըստ այս իրավահայտ աղբյուրների երկրային կյանքում հանցագործություններ կատարած և արդեն մահացած, այդ քվում՝ մահապատճեած անձին պարաներով կամ շղթաներով կապելուն տրվել է հատուկ նշանակություն և իմաստ: Մահվանից հետո նրանց հոգիները աստվածային դատարան են բերվել հատուկ ձևերով կապված վիճակում և քարշ տալով<sup>4</sup>: Դատավճռի կայացումից հետո դև Վիզարջը կապված վիճակում նրանց քարշ է տվել դժոխք, և այնտեղ նրանք շարունակել են մնալ կապանքների մեջ: Եվ այդպիսով՝ մինչև մեռելների հարությունը և արդար դատաստանը:

Դժոխքում մարդկանց հոգիներին կապելու ձևեր և կապված լինելու տեսարաններ են նկարագրված նաև զրադաշտական այնպիսի իրավահայտ աղբյուրում, ինչպիսին «Արտա Վիրապ Նամակն» է: Դրանում նկարագրված է մողերի կողմից երկնային արքայություն և դժոխք առարված սուրբ Արտա Վիրապի շրջագայության պատմությունը: Դժոխքում գտնվելիս նա տեսնում է հանցավոր շատ հոգիների, որոնք սառցափուսերում էին գտնվում սարսափելի ձևերով կապված վիճակում:

Ըստ այդ գրքի 37-րդ գլխի դժոխքի մի սառցափուսում նա տեսնում է մի խումբ տղամարդկանց և կանանց, «որոնց հոգիները դժոխքում գլխիվայր (կապված) կախված էին: Եվ նրանց ամբողջ մարմինը կրծում էին օձերը, կարիճները և այլ խրախսութաներ»: Արտա Վիրապի հարցին, թե ինչու են այդ հոգիները նման տանջանքների մատնված, նրան ուղեկցող դիցերը՝ Սրոշ Առաքինին և Ատր Յազատը պատասխանում են, որ նրանք երկրային կյանքում «չեն հոգացել ջրի և կրակի մասին...»<sup>5</sup>: Նույն աղբյուրի 58-րդ գլխում Արտա Վիրապը դժոխքի մեկ այլ սառցափուսում տեսնում է մեկ այլ կապված մարդու հոգու, որին «քարշ տվողները քարշ էին տալիս դժոխք և շարունակ հարվածում էին»: Եվ դա՝ ջրերը («մեծ ջուրը», «ավազանի ջուրը» և «զնայուն ջուրը») պղծելու համար: Չուրը, կրակը և հողը զրադաշտական սրբազն տարերքներ են՝ պաշտպանվող իրավունքով<sup>6</sup>: Եվ այդ հոգիները փաստորնեն դատապարտված են եղել կապ-

ված վիճակում նման պատիժներ կրելու՝ անհավատության, աղանդավորության համար:

Նույն աղբյուրի 67-րդ գլխում Արտա Վիրապը դժոխքի մեկ այլ սառցափուսում տեսնում է ևս մի չարագրոծ մարդու հոգու, «որը կախված էր մի ոտքից դժոխքի խավարում»: Իսկ 74-րդ գլխում էլ նա այնտեղ տեսնում է մի խումբ հոգիների, «որոնք գլխիվայր մի ոտքից կախված էին»: Պարզվում է, որ նրանք «երկրի վրա անատուններին, կովերին և ոչխարներին սպանել և մորթուել են»:

Համաձայն «Արտա Վիրապ Նամակի» 77-րդ գլխի՝ դժոխքի մեկ այլ սառցափուսում Արտա Վիրապը տեսնում է «...հոգիների, որոնց մեջը, ձեռքերը և ոտքերը պատած էին վերքերով, և հետևից գլխիվայր կախված էին և ծանր քարեր էին տեղում նրանց մեջքին»: Պարզվում է, որ նրանք աստվածային դատարանի կողմից այդպիսի պատժի են արժանացել անատունների հետ դիտավորյալ կերպով վատ, «հակառակ օրենքի» վարվելու համար: Օ. Չունակովայի կողմից «Արտա Վիրապ Նամակի» ուսուերեն թարգմանության մեջ, բացի ամենայնից, նշված է նաև, որ նրանց «քեները հետևից կապված էին»: և նրանք «գլխիվայր կապված-կախված էին հալած պղնձի վրա»<sup>7</sup>: Օ. Չունակովայի այս թարգմանությունից հետևում է նաև, որ վերոնշված բոլոր դեպքերում կախվածները եղել են կապված վիճակում: Հասկանալի է, որ առանց կապելու մեղավոր հոգիները կախվել չեն կարող:

Նույն իրավահայտ աղբյուրի 80-րդ գլխում էլ Արտա Վիրապը դժոխքի սառցափուերից մեկում նորից տեսնում է «մի քանի հոգիներ, որոնք գլխիվայր կախված էին դժոխքում»: Նրանք շարունակ աղաղակում էին. «Զափն ուղիղ է»: Պարզվում է, որ նրանց ոտքերից կապել և կախել էին «չափը խախտելու», «երկրի վրա քարը, կապիճը և այլ չափեր փոքր բռնելու համար»<sup>8</sup>: Իսկ նրանց աղաղակը չափի ուղիղ լինելու մասին բազմինաստ է: Դա նշանակում է, որ նրանք իրենց նկատմամբ նշանակված պատիժը համարում են երկրային կյանքում գործած արաքների համար սահմանված ճիշտ և արդարացի չափ՝ զոշալով դրանց կատարման համար: Դժոխքում զոշալը նշանակություն չունի և չի մեղմացնում դատապարտյալի վիճակը, բայց կարող է հաշվի առնվել մեռելների հարության և վերջին դատաստանի ժամանակ:

Իսկ ահա նույն աղբյուրի 88-րդ գլխում էլ Արտա Վիրապը դժոխքի մեկ այլ սառցափուսում տեսնում է «մի մարդու հոգի, որը գլխիվայր կախված էր կախաղանից և սեռական հարաբերություն ուներ դժոխքում» (Օ. Չունակովայի թարգմանություն՝ «ձեռնաշարժությամբ էր զրադկում»)<sup>9</sup>: Այդ ընթացքում հոգին զոշման խոսքեր չի ասում: Իսկ դա նշանակում է, որ վերջին դատաստանի ժամանակ

նրան ներում չի լինելու:

Ավեստայի «Օրմագդ-յաշտի» 27-րդ գլխում Օրմագդը (Արամագդը, Ահուր-Մազդը) Զրադաշտին ասում է, որ պետք է «կործանել սրբազն առարինությամբ սրբերի՝ նրանց («զավագույն աշխարհի» թշնամիների – Ս.Խ.) թշնամությունը: *Փակեցե՞ք ականջները նրանց, թարերը նրանց՝ բռնեցեք, ոտքերը նրանց փշրեցեք և կապեցեք նրանց»:* Իսկ Ավեստայի «Արդ-յաշտի» 38-րդ տանը զրադաշտական հերոս Տրայտոնը՝ աղոթելով Աշի դիցուհուն, նրանից խնդրում է. «Այնպիսի հաջողություն տուր ինձ, ովք բարերար Աշի, որ ես կարողանամ գերել թուրանցի Ֆրանիսրասյանին և կապյալ տանել, կապյալ բերել այդ շարագործին Խոսրովի մոտ»: Այսպիսով, Արամագդ աստվածահայրը հրամայում է կապել «զավագույն աշխարհի» թշնամիներին, փշրել նրանց ոտքերը և կապել նրանց, իսկ Տրայտոն հերոսը երազում է գերել և կապել զրադաշտական հավատի այնպիսի մի ամբարիշտ թշնամու, ինչպիսին Ֆրանիսրասյանն է, և կապված վիճակում նրան քարշ տալ Խոսրով թագավորի մոտ: Այսպիսով, Ավեստայի այս տողերից պարզվում է, որ իրական կյանքում հանցավորին կապված վիճակում դատարան բերելը (և դատարանից պատժավայր տանելը) կատարվել է ճիշտ այնպես, ինչպես դա արվել է դև Վիզարշի կողմից՝ հանդերձյալ կյանքում:

Այսպիսով, պարզվում է, որ զանազան ձևերով կապելու իսկապես էլ եղել է զրադաշտական նախարննական քրեալատավարական ծխական միջոց, խափանման միջոց և պատիժ: Բայց միայն իրանական այս իրավահայտ աղբյուրների հիմնա վրա հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել կապելու իմաստի ու նշանակության մասին: Դա հնարավոր է կատարել միայն իին հայկական իրավահայտ աղբյուրների հիմնա վրա ու միջոցով՝ իրանական աղբյուրների հետ դրանք սերտ կապի մեջ դնելով:

Հանցագործներին զանազան ձևերով կապելու մասին բազմաթիվ հիշատակումներ են առկա զրադաշտական իրավունքի ճանաչման այնպիսի վաղքրիստոնեական հայկական աղբյուրներում, ինչպիսիք են՝ Ազարանգեղոսի «Հայոց պատմությունը», Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառքը», Փավստոս Բուղանիի, «Ազար Փարայեցու, Եղիշեի և այլ պատմիչների երկերը: Բայց պետք է զարմանքով փաստել, որ հայկական այս և այլ աղբյուրների հետազոտությամբ զրադվոր գիտնականները, հատկապես՝ հայ, զարմանալիորեն հետու են դրանք Ավեստայի և զրադաշտական այլ պատմական աղբյուրների հետ կապելուց: Այնինչ դրանց անքակտելի միասնությունն ու կապն ակնառու է: Պետք է նաև շեշտել, որ զրադաշտությունը և Ավես-

տան նաև հայկական, և ոչ թե միայն պարսկական երևույթներ են: Բացի դրանից, զրադաշտությունը հայերին բռնությամբ չի պարտադրվել, ինչպես կարծում են ոմանք<sup>14</sup>: Ընդհակառակը, Հայաստանից է այն տարբել Իրան: Զրադաշտն էլ, ըստ որոշ աղբյուրների, հայ է<sup>15</sup>: Նա Իրանի միջինասիական երկրամաս է զնացել Հայաստանից կամ մերձակա շրջաններից, այնտեղ քարոզել իր ուսմունքը, ստեղծել ֆենոմենալ պետականական համակարգ՝ սկիզբ դնելով զրադաշտական քաղաքակրթությանը:

Կապելը որպես նախաքննության և դատաքննության իրականացման միջոց և մեթոդ, այդ թվում՝ խափանման միջոց և որպես պատիժ՝ ուղեկցվող ծխական արարողակարգերով, նախ և առաջ ներկայացված ու նկարագրված է Ազարանգեղոսի «Հայոց պատմության» մեջ: Ըստ այդ աղբյուրի, եթե Մեծ Հայքի Տրդատ Երրորդ թագավորը (282/283-330/332), «իր արքայության առաջին տարում» (նոտավորապես 282-283 թթ.), Երիան ավանի Անահիտ դիցուիու տաճարում, Մեծ Հայքն ազատագրելու հերթական արշավն սկսելու առթիվ գոհության պատուարագ մատուցելիս է լինում, ապա նրա շքախմբի անդամ Գրիգոր Լուսավորիչը հրաժարվում է Անահիտ Աստվածուին երկրպագել: Բացահայտվում է նրա քրիստոնյա լինելը: Թագավորը նրան մեղադրում է աղանդավորության, ապահուտավորության<sup>17</sup> մեջ: Հայտարարվում է, որ այդ արարքների կատարման համար Գրիգորն արժանի է նեղության, անարգանքի «...և յառաջ ձգելոյ՝ բանդ և կապանս և մահ, որ հատանել զյոյս կենաց նարդկան...»: Այսպիսով, Ազարանգեղոսի կողմից մատնանշվում են ոչ միայն հանցավոր արարքները, որը կատարել է Գրիգորը, այլև դրա համար օրենքով նախատեսված պատիժը՝ «քանդ և կապանս և մահ»: Պետք է ասել, որ «քանդ և կապան» բառակապակցությունը Ազարանգեղոսի գրքի սինթրոն թարգմանության մեջ ճիշտ չի թարգմանվել: «Քանդ» բառը թարգմանվել է որպես «քանտ»: Այնինչ «քանդ»՝ տվյալ դեպքում նշանակում է թոկ՝ «կապ, յօդուած՝ գոտի»՝ առաջացած պարսկերեն «band» բառից: Եվ խոսքն այստեղ Գրիգորին բոլերով կամ շղթաներով կապելու, և ոչ թե բանտարկելու (որը նույնպես ենթադրվում է) մասին է:

Գրիգոր Լուսավորչի կողմից կատարած հանցագործների կապակցությամբ քննություն սկսելով թագավորը նրան առաջարկում է գողալ, խոստովանել մեղքերը, «դիցն պաշտոն մատուցել» և այդպիսով խուսափել սարսափելի պատիժներից, որոնք օրենքով նախատեսված են նման արարքներ կատարելու համար: Եվ եթե նա հրաժարվում է իրեն տրված այդ հնարավորությունից, ապա անմիջա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես էլ կապվում է: Եվ կապելը քննության այս փուլում հանդես է գալիս որպես քրեաղատավարական խափանման միջոց՝ կիրառվող կասկածյալի նկատմամբ, նրա կողմից քննությունից ու դատից խուսափելու բացառելու և նրան գոջման հակելու համար: Այն նաև գործի քննությունը (հրապարակավ կատարվող) վարելու մերող է, ինչպես նաև հանգագործությունների կանխման ու նախականինման միջոց:

Գրիգորին կապելու և հարցաքննելու ընթացքում թագավորը նրան սպառնում է զանազան տանջանքներով: Ազգաբնակեղոսի երկի 56-57-րդ պարբերություններում բերված է Գրիգորի պատասխանը թագավորի այդ սպառնալիքներին: Նա հայտարարում է, որ չի վախենում «քանդից և կապանքներից», որ ինքն արդեն իսկ «կապված» է Քրիստոսի կողմից, և որ զանազան «նեղություններ» կրելու համար ուրախ կլինի: Նա նաև համոզվածություն է հայտնում (64-րդ պարբ.), որ Քրիստոսն «...արձակեացէ զկապեալս ի տանէ կապանաց կրապաշտութեան՝ որ կապեալ են ի մելու, և խօսեցէ զղթայս անօրէնութեան՝ որ են իբրև զքեզդ: Իսկ յայդպիսի կապանաց, զոր դրու սպառնաս՝ սովոր է յայտնել զողորմութեան շնորհս և փրկել զյուսացեալս իր»<sup>20</sup>: Այնուհետև նա համարձակորեն զրադաշտական աստվածներին անվանում է անշունչ, ձեռակերտ առարկաներ, «անշշունչ և անմունչ» երևակայական արարածներ, ձիեր և զորիներ (պարբ. 67-69-րդ):

Լսելով այդ ամենը, զայրագնած թագավորը նրան մեղադրում է նոր հանցանքների՝ զրադաշտական աստվածներին անպատճելու մեջ և հրամայում «...ետ կապել զնա ձեռս ետու, և արկանել զզայլ (քերանակապ) ի թերամ նորա. և ետ կախել շառաշեղս աղի ի վերայ ողին նորա, և տալ զզելոց կրծից նորա, և արկանել առասանս (բարակ թոկերով – Ս.Խ.) ի կապս կրծից զելարանացն, կապել և համրանեալ ի բարձրաւանդակ տանիս, ապարանիս որմոյն մեքենայիր: Եւ կայր պրկեալ կապեալ այնպես զաւուրս եօթն: Եւ յետ յեօթն աւուրն ետ հրաման, և լուծին զնա ի շարաշար, և ի դառն կապանացն, և ածին կացուցին յառաջի նորա»<sup>21</sup>: «Զարաշար դառն կապանաց» նախնելը և 7 օր կախելը զրադաշտական նախաքննությունը, դատավարությունն ուղեկցող ծիսական-դատավարական արարողություն է: Տվյալ դեպքում բեմադրվում է այն վիճակը, որում հայտնում են ամբարիշտները և աղանդավորները դժիմքում: «Արտա Վիրապ Նամակի» 77-րդ գլխում ներկայացված է մի տեսարան, ըստ որի Արտա Վիրապը դժիմքում շրջագայելիս տեսնում է «հոգիներ, որոնց մեջքը, ձեռքերը և ոտքերը պատած էին վերքերով, և հետևից գլխիվայր կախված էին և ծանր քարեր էին տեղում

նրանց մեջքին»: Իսկ այդ հոգիները ողբում և զջում էին՝ երկրում կատարած իրենց անիրավությունների համար: Նոյն տեղում էլ պարզվում է, որ նրանք այդպիսի պատժի են արժանացել ընտանի անասունների հետ դիտավորյալ կերպով վատ, «հակառակ օրենքի», վիրավորական կերպով վարվելու համար<sup>22</sup>: Գրիգորն էլ նոյնապիսի տանջանքների էր ենթարկվում, քանզի նա աստվածներին կոչել էր ձիեր ու զորիներ, այդպիսով վիրավորանք հասցելով թե՛ աստվածներին, թե՛ անասուններին: Բայց եթե զրադաշտական դժոխիքի կապակները անկեղծորեն գոջում են երկրում կատարած իրենց հանցանքների համար, ապա Գրիգորը՝ ոչ: Իսկ թագավորը ձգտում է այդպիսի կտտանքների միջոցով Գրիգորին հակել զջման ու ապաշխարանքի: Այդպիսով նա ցանկանում է Գրիգորին «փրկել» դժոխը ընկնելուց, որտեղ զջալը արդեն որևէ նշանակություն չունի:

Այդպիսով, դեռևս նախաքննության ընթացքում, իրականացվել են պատժի չորս գլխավոր նպատակներ. սպասվելիք պատժի սպառնալիքով ազդել հանցագործի վրա, ստորացնել, ահարեկել նրան և հակել զջման ու մեղքերի խոստովանության (հատուկ պրենենցիա): Հաջորդ նպատակն է նաև ահարեկել պոտենցիալ հանցագործներին, դրանով իսկ կանխել նման տեսակի հանցագործությունների կատարումը (ընդհանուր պրենենցիա): Բացի դրանից, հրապարակային քննության ու կտտանքների նպատակն է վերադաստիարակել «հանցագործին» և զրադաշտական կրոնն ու եկեղեցին պաշտպանել ուսնաձգություններից: Պետք է նաև նշել, որ Ավեստայի մեջ, ինչպես նաև իրանական զրադաշտական որևէ այլ աղյուրում «շարաշար ու դառն կապանքներ» արտահայտություն չի հանդիպում: Մենք, ինչպես տեսնում ենք, նման պրենենտիվ ներգործության միջոց, և այն էլ՝ հրապարակայնորեն կատարվող նախաքննության փուլում, գոյություն ունեցել է:

Յոթ օր հետո, ազատվելով «շարաշար ու դառն կապանքներից», Գրիգոր Լուսավորիչը նորից բերման է ենթարկվում թագավորի մոտ՝ հարցաքննության: Թագավորը, անկասկած, նրանից սպասում է զջման խոսքերի: Բայց նախահարձակ լինելով նա մեղադրում է թագավորին հեթանոս լինելու մեջ, նորից նշակալում զրադաշտական աստվածներին և հավարված մարդկանց ու դահիճներին քարոզում քրիստոնեական գաղափարներ: Լսելով այդ, թագավորը հրամայում է (Ազգաբնակելոս, 74-րդ պարբ.) նորից «կախել զնա զլիսիվայր զմիոյ ուստածէն զի մինչ դեռ կայցէ զլիսիվայր՝ ծխսեցն ի ներքոյ նորա աղր, և արքց զամ սաստիկ քրօք դպարով: Եվ տանջեցին զնա տասն այր՝ ըստ հրամանի թագավորին. և կայր նա կախեալ այնպես

առուրս եօթն»<sup>23</sup>:

Հասկանալի է, որ կախելու այս նոր տեսակը նույնական դժոխային պատկերի ծիսական, հրապարակային բեմադրություն է՝ գրադաշտական նախաքննական օրինական մերոդ: «Արտա Վիրապ Նամակի» 67-րդ գլխում նկարագրված է, թե ինչպես դժոխքում շրջազայելիս Արտա Վիրապը տեսնում է մի չարագործ մարդու հոգու, որը կախված է եղել «...մի ոտքից դժոխքի խավարում»: Նույն աղբյուրի 93-րդ գլխում էլ նկարագրված է դժոխքում մի ոտքից կախված մեկ այլ մեղավոր հոգի, որի գլխի տակ աղը էին վառել, որպեսզի նա ծխից ու սորից շնչահեռակ լինի: Այդ իրավահայտ աղբյուրի այլ գլուխներում նույնպես նկարագրված են համանման տեսարաններ: Այդ ամենը նորից վկայում է այն մասին, որ թագավորը նորից կամայականորեն չի գործում: Գրիգորը կտտանքների է ենթարկվում ըստ գրադաշտական օրենքի և քննչական-դատական որոշակի ծիսակարգով: Կտտանքի տեսակների ընտրությունն ու կիրառումն ել ունի որոշակի իմաստ և նշանակություն: Տվյալ դեպքում դրանք կիրառվում են հավատի դեմ ուժնձգած անձի նկատմամբ: Նմանները նույնպիսի տանջանքներ են կրում դժոխքում:

Այդպես 7 օր լինելով կախված մեկ ոտքից, ու ստիպված լինելով շնչել վառված աղբի ծոլիս, Գրիգոր Լուսավորիչը շարունակել է քարոզել քրիստոնեական գաղափարներ: Եվ «...կայր նա կախեալ այսպես՝ խոսեցավ զայս ամենայն. և գրեցին ատենակալ դպիրքն նշանագրեացն. Չի առ ոչինչ համարեալ զկախսադանն, և ոչ զբանական գրեաց ինչ զվիշտու...»<sup>26</sup>: Դպիրիներն ել զրի են առել նրա մտքերը, որպեսզի դրանք, որպես մեղավորության ապացույց, թագավորական դատարանում օգտագործեն նրա դեմ<sup>27</sup>: Լսելով դպիրիների զեկույցը և տեսնելով Գրիգորի «համառություննը» (Ազարանգեղոս, 102-րդ պարբ.), թագավորը հրամայել է «...քերել կոճելոս փայտից, և առնել ըստ ոյորի խոտացած ոտից նորա. և դնել և պնդել ոմքին առասկոր» («քարակ պարաներով ոմքին պրկեր»), մինչև իշաներ արիւնն ընդ ծայրս ոտից մատանց նորա...»<sup>28</sup>: Եվ դա նորից՝ Գրիգորին գղջման հակելու, նրա հոգին կործանումից «Փրկելու», նրան ուղղելու և վերաբաստիարակելու, ինչպես նաև հանդիսատեսներին ահարեկելու նպատակով:

Ազարանգեղոսի գրքի 115-րդ պարբերությունում էլ նկարագրված է Գրիգորին կապելու մի նոր խորհրդավոր ձև: Երբ վերջինս հերթական անգամ մերժում է իրեն ուղղված զղալու, ներում և փրկություն խնդրելու պահանջը, ապա Թագավորը հրաման է տալիս «...արկանել կապիճս երկարիս ի ծունկս նորա, և վարել ուղումն ստուարս, և բառնալ

ի կախադան՝ մինչև յոշեցին ծունկը նորա անդէն: Եվ կա կախեալ այնպես զերիս առուրս»<sup>29</sup>: Այսպիսով, Գրիգորի ծնկներին հազցրել են երկարե կապիճներ, դրանք ամրացրել կուաններով, որից հետո կապել և նորից բոկերով կախել կախադանից: Հարց է առաջանում, թե ինչու՝ են նրա ծնկներին կապիճներ կապել, ի՞նչ բան է կապիճը, և ինչպես ու ինչու՝ են այդպես հոշոտել նրա ծնկները: Կապիճը եղել է սրնապան գրահ «կամ էլ նման տանջական մի գործիք»: Հասկանալի է, որ տվյալ դեպքում կապիճն օգտագործվել է որպես տանջական գործիք: Նրա ոտքերի թաքերն ու ծնկները կապիճների նիշոցով հնարավորին ծովել, այլանդակվել են, դրանց տրվել է դևերի ոտքերի և ծնկների նման ձևեր: Հար և նման այն դևի ոտքերի ձևերին, որին իր մագիլներով բռնել և պահում է ավետական Վարազմ թոշումը՝ պատկերված Սիսիանում հայտնաբերված մ.թ.ա. 1-ին դարի մեղալինի վրա<sup>30</sup>: Ավետայի «Թաղման ծես» ֆրակարդի 72-րդ ստանում էլ նկարագրված է դիակային պղծության դևը՝ Դրուշխ-յա Նայտուն, «զագրեի ճանճի տեսքով, թռած եկած հյուսիսային կողմից (դժոխքից – Ս.Խ.), դեալ առաջ ցցված ծնկներով, հետևից վեր ցցված հետույքով՝ ամբողջապես ծածկված պտերով (խոցերով), ինչպես մի սարսափելի խրաֆստար (դժոխային գեռում)»<sup>31</sup>: Եվ այս դեպքում նորից, որպես զրադաշտական հավատի թշնամու և «գիշական էության», նրա նկատմամբ կատարվել է մի նոր կրոնաիրավական ծես: Իսկ նպատակը եղել է նրա մարմնին հաղորդել դիկական ձևեր, այդպիսով նրան ստիպել հրաժարվել քրիստոսի նկատմամբ հավատից:

Կախադանի վրա երեք օր կապված և կախված պահկելուց հետո, երբ թագավորը ցանկացել է շարունակել նախաքննությունը, նրան է մոտեցել իշխաններից մեկը և հայտնել, որ Գրիգորն իրականում նրա հայր Խոսրով Երրորդ Մեծ թագավորին սպանած Անակ Արշակունու որդին է<sup>32</sup>: Իմանալով այդ, թագավորն անմիջապես էլ «...հրաման տայր կապեալ ոտիր և կապեալ ձեռօր և կապեալ պարանցաւ խաղացուցանել զնայ Այրարատ գաւառ, և տալ զնայ ի դրեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իշուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մերցի: Եվ եղեվ նա յայն վիրապի ամս երեքտասան»<sup>33</sup>:

Այսպիսով, Գրիգոր Լուսավորիչը դատապարտվել է մահապատժի: Եվ կապվելով հատուկ ձևով՝ ուղքերից, ձեռքերից, պարանոցից, ինչպես կապվել են մահապարտները, նա նետվել է Խոր Վիրապ: Նույն կերպ հանցավոր հոգիներին կապում և նրանց աստվածային դատարան, իսկ այստեղից էլ դժոխք էր քարշ տալիս մահվան դև Վիգարշը: Իսկ Գրիգոր Լուսավորչին, հենց երկրա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յին դժոխքն է կամ դժոխքի նախադուրը՝ լի օձերով և այլ զեռուներով: Եվ ինչպես Արտաշատի, այնպես էլ բոլոր այլ Խոր Վիրապները եղել են ոչ թե բանտարկության վայրեր, ինչպես երբեմն վիամտարար կարծում են որոշ գիտնական այրեր<sup>36</sup>, այլ դժոխքի նախադոներ, մահապատժելու խցեր: Դրանից հետո Տրդատ Մեծ արքան հրապարակել է երկու հակադանդապորական հրամանագրեր, որոնցով դատավորները պարտավորեցվում են դիցերին անպատվողներին «կապեալ ոտիք, կապեալ ձեռօք, և կապեալ պարանոցաւը ի դուռն արքու-

նի ածցեն»<sup>37</sup>: Եվ նորից պետք է հիշեցնել, որ Գրիգոր Լուսավորչին տրված բոլոր տաճանքները, այդ թվում՝ կապելու տարրեր ձևերը և պատիժը կապելու և որ Վիրապ նետելու ձևով ոչ թե բազավորի կամ դահիճների հիվանդ երևակայության, կամայականության արդյունք են, այլ զրադաշտական իրավունքն նախատեսված իրավական-ծիսական գործընթացներ:

### ԸԱՐՈՒՆԱԿԵԼԻ

<sup>1</sup> Տե՛ս, Ծեսերի և արարողությունների մասին տե՛ս Կովլեր Ա. Ի. Անտրոպոլոգия права. Учебник для вузов. М., 2002, с.132-138; Марсель Месс. Социальные функции священного//Набросок общей теории магии. СПб., 2000, с. 107-232; Малиновский Б. Магия, наука и религия//Магический кристалл. Магия глазами ученых и чародеев. М., 1994.

<sup>2</sup> Տե՛ս, Աвеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Санкт Петербург, 1998, с. 123-125.

<sup>3</sup> Տե՛ս, Зороастрийские тексты. Суждения Духа разума (Дадестан-и меног-и храт). Подготовлено к печати О. М. Чунаковой//Памятники письменности Востока, CXIV, М., 1997, с. 6.

<sup>4</sup> Տե՛ս, Խաչատրյան Ս. Ա., Քարշ տապ որպես հանցագործությունների, խախտումների բացահայտման, կանխման ու նախականիման միջոց և պատժատեսակ: Գ-ՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 1, 2013թ., էջ 689-706:

<sup>5</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, պահլավերեն բնագրից բարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՀՍՍԴ ԳԱ հրատ., 1958թ., էջ 64-66:

<sup>6</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 76:

<sup>7</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 88:

<sup>8</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 93:

<sup>9</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջեր 99-100:

<sup>10</sup> Տե՛ս, Պեհлевийская божественная комедия. Книга о праведном Виразе (Арда Вираз Намаг) и другие тексты. Введение, транслитерация пехлевийских текстов, перевод и комментарий О. М. Чунаковой. М., 2001, С. 123.

<sup>11</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջեր 101-102:

<sup>12</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 103: Книга о праведном Виразе, О. Չունակովայի թարգմ., էջ 125:

<sup>13</sup> Տե՛ս, Աвеста в русских переводах (1861-1996), С. 169-170, 360:

<sup>14</sup> Տե՛ս, Russel J. Zoroastrianism in Armenia. Cambridge (MA), London, 1987; Garsoyan Nina, The Iranian Substratum of the “Agatangelos” Cycle, W., 1982; Նոյն ինքը՝ Armenia between Bysantium and the Sasanians. Variorum, Reprint, L., 1985; Widengren G. Mani und der Manichaismus. Stuttgart, 1964; Նոյնի՝ Die Religionen Irans. Stuttgart, 1965.

<sup>15</sup> Տե՛ս, Վենդ Ալիշան «Հին հավատը կամ հեթանոսական կրոնն հայոց», Վենդտիկ, 1895: Արնոբի. Против язычников. СПб, 2008, Кн.1, гл. 5, С.127. Кн.1, гл. 52, С. 156; Платон, Государство//Собрание сочинений, в трех томах, т. 3 (1), М., „Мысль“, 1971, С. 447-450, 452, 453; Климент Александрийский. Строматы. Кн. 5, гл. 3, 103.1://Օթց և սույն պատմությունների մասին պատմություններ, Երևան, 2011թ., էջ 355-707:

<sup>16</sup> Տե՛ս, Մակովելսкий Ա. Օ. Ավետա. Բակу, Իзд. АН Аз. ССР, 1960. Այս հեղինակն անցողունի և անիմն կերպով ձգուում է այժմեան Արքեթանն իր թուրք բնակիչներով ներկայացնել վաղմանակներից գոյություն ունեցող երկիր ու ժողովուրդ, Զրադաշտին՝ այդ երկրի ու ժողովուրդի զավակ, և այդ երկրի հայատանամերձ դրշաներից Միջին Ասիա գնացած անձ:

<sup>17</sup> Հաստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» ապախտավոր՝ նշանակում է «անսուրբ, պիոծ, ապերախտ, երախտամոռ» և այլն: Տե՛ս, նշված բառարանը, հ. 1-ին, Երևան, 1971թ., էջ 225:

<sup>18</sup> Տե՛ս, Ազարանգելոս, «Հայոց պատմություն», Երևան, 1983թ., էջ 40:

<sup>19</sup> Տե՛ս, Աճառյան Հր., «Հայերեն արմատական բառարան», հ. 1-ին, Երևան, 1971թ., էջ 406: Պետք է նաև նշել, որ բարգմանիչները այդ 53-րդ պարբերությունում բաց են թողել և չեն բարգմանել նաև «ապախտ» բառը, որը

նույնպես նշանակալից թերացում է:

<sup>20</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, «Հայոց պատմություն», Երևան, 1983թ., էջ 44:

<sup>21</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 46:

<sup>22</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, Էջեր 99-100:

<sup>23</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, նույն տեղում, էջ 50:

<sup>24</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 93:

<sup>25</sup> Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, Էջեր 76, 88, 93, 99-100, 105:

<sup>26</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, նույն տեղում, էջ 68:

<sup>27</sup> Փաստը, որ դպիրները զրի են առել Գրիգորի խոսքերը, վկայում է այն մասին, որ զրադաշտական Հայաստանում դատավարությունը կատարվել է զրավոր կերպով: Դա էլ նշանակում է, որ հայկական զրադաշտական պետությունը եղել է իրավական պետություն:

<sup>28</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, նույն տեղում, էջ 68:

<sup>29</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 74:

<sup>30</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973թ., էջ 525: Զահուկյան Գ. Բ., Հայերենի սոսուզաբանական բառարան, Երևան, 2010թ., էջ 385:

<sup>31</sup> Տե՛ս, Արտակ Միզսիսյան, Տիգրան Մեծ, թագավորներից մեծազույնը, Երևան, 2010թ., էջ 73:

<sup>32</sup> Տե՛ս, Ավետարան (1861-1996)..., ս. 96-97, 107, 451.

<sup>33</sup> Տե՛ս, Խաչատրյան Ս. Ա., Խորոնք Երրորդ Մեծ Արշակունի արքայի թագավորելու և զոհվելու ժամանակի հարցը, Պատմաբանավիրական համեմատ, Խ 1, 1915թ., էջ 183-203:

<sup>34</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, նույն տեղում, էջ 76:

<sup>35</sup> Տե՛ս, Ավետարան (1861-1996), ս. 123-125; Զороաստրիական տեքստերը. Հայոց գործականությունը և դաստիարակությունը (Պատմաբանավիրական համեմատ), ս. 6, 17.

<sup>36</sup> Տե՛ս, Թովմասյան Ա., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, հ. 1, Երևան, 1962թ., էջեր 212-213:

<sup>37</sup> Տե՛ս, Ազարանգեղոս, նույն տեղում, էջեր 78-82: Խաչատրյան Ս. Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հականականագույն իրամանագրերը, դրանց արքիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010թ.:

Самвел Хачатрян

Кандидат юридических наук, доцент, преподаватель ГГУ

## РЕЗЮМЕ

### Связывание как мера пресечения, метод расследования и вид наказания в зороастриском и раннехристианском армянском праве

В Авесте и в иранских зороастрийских источниках познания права часто описываются некоторые виды связывания веревками и цепями подозреваемых, обвиняемых и осужденных. Это являлось как мерой пресечения, так и методом судебного следствия, а также видом наказания и компонентом похоронного обряда. Такие обрядовые действия описываются и в армянских раннехристианских источниках познания права - в «Истории Армении» Агафангела, в «Истории Армении» Фавста Бузанда, в «Истории Армении» Лазаря Парпети а также в книге Египте «О Вардане и армянской войне». В частности, Агафангел описывает историю связывания Григора Просветителя. Когда выяснилось, что состоящий в свите царя Великой Армении Тиридата Третьего Григор является отступником, так как он отказался от зороастризма и стал христианином, то в ходе расследования этого преступления он неоднократно подвергался ритуальному связыванию различными способами. Приговоренный в последствии к смертной казни, он был связан особо «тяжким» образом (ноги и руки притягивались к шее) и брошен в Хор Вирап - место, по своим характеристикам приближенное к зороастрийскому аду.

После подавления восстания 451 года суд при иранском царе Ездигерта Втором осудил многих армянских князей и духовных лиц, а также сатрапа Великой Армении Васака Сюни, к различным видам обрядового связывания или лишения свободы.

Обрядовое связывание впоследствии перешло в раннехристианское армянское право (религию) и применялось в средневековой Армении.

**Ключевые слова:** Тиридат Третий, Григорий Просветитель, связывать, зороастрийская Армения, христианская Армения, Хор Вирап, ад.

Samvel Khachatryan  
Doctor of Law, Associate Professor, GSU Lecturer

#### **SUMMARY**

#### *Tying as a preventive measure, a method of investigation and a form of punishment in Zoroastrian and early Armenian Christian Law*

Avesta and Iranian Zoroastrian sources of knowledge of law often describe certain types of tying by ropes and chains of suspects, defendants and convicts. It was both a preventive measure and a method of judicial investigation, as well as a component of ritual act. Such ritual-like actions are also described in ancient Armenian sources of knowledge of law – in the “History of Armenia” of Agathangelos, the “History of Armenia” of Faustus of Byzantium, the “History of Armenia” of Lazarus Pharpensis as well as Eghishe’s book “About Vardan and the Armenian war”. In particular, historian Agathangelos describes the story of tying of Gregory the Illuminator. Being the courtier of the King of Great Armenia Tiridates III, Gregory departed from Zoroastrism and adopted Christianity. During the investigation of this crime he was frequently tied in different ways as a part of a ritual. Later on he was sentenced to death, tied particularly “roughly” (arms and legs pulled to the neck) and thrown into Khor Virap – a place resembling the Zoroastrian hell.

After the suppression of the rebellion in 451, the court of the Iranian king Yazdegerd condemned many Armenian princes and clergymen, as well as the satrap of Great Armenia Vasak Syuni, to various types of ritual tying and imprisonment.

Ritual tying was afterwards adopted by the early Armenian Christian law (religion) and was used in medieval Armenia.

**Keywords:** *Tiridates III, Gregory the Illuminator, tying, Zoroastrian Armenia, Christian Armenia, Khor Virap, hell.*